

Նկարագրական բարոյագիտութիւնը կրնայ զանազան ելակէտեր ունենալ: Եթէ նկատի ունենանք՝ պատմութեան ընթացքին յայտնուած տարբեր մշակոյթներու բարոյական երեւոյթները, պիտի տեսնենք, որ օրինակ պատմաբանը, իր աշխատասիրութեան ուշադրութիւնը կը կեդրոնացնէ՝ բարոյական երեւոյթներու գլխաւորաբար նկարագրութեան եւ հաւանաբար բաղդատութեան վրայ: Այստեղ պատմաբանը, որպէս դիտորդ, նկատողի ու նկարագրողի դերին մէջ է: Իսկ ընկերաբանը, կը փորձէ նոյն բարոյական երեւոյթները բացատրել եւ տուեալ մշակոյթի պայմաններուն համաձայն՝ զանոնք պատճառաբանել ու արժեւորել: Եւ վերջապէս հոգեբանը, կրնայ նոյն բարոյական երեւոյթներուն հանդէպ բոլորովին տարբեր մօտեցում ունենալ. ան անհատի հոգեկան կառոյցին մէջ կը պրպտէ բարոյական երեւոյթներուն գլխաւոր դրդապատճառները:

Նկարագրական բարոյագիտութեան կիզակեդրոնը կրնայ ըլլալ անհատը, որպէս առանձին անձ կամ ընկերութիւն մը, որպէս հաւաքական ամբողջութիւն:

3.- Մետա-բարոյագիտութիւն

Կանոնական եւ նկարագրական արտայայտութիւններու կողքին, բարոյագիտութեան մարզին մէջ, երբեմն կը հանդիպինք արտայայտութիւններու, որոնք մեթոդական կամ լեզուա-վերլուծական բնոյթ կը կրեն. այս վերջին-ները կը պատկանին՝ մետա-բարոյագիտութեան, որ իր կարգին կանոններ չի սահմաներ այլ աւելի խորը թափանցելով կը վերլուծէ արդէն գոյութիւն ունեցող բարոյական երեւոյթները եւ կանոնները:

Աշխատասիրութեանս այս երրորդ մասին մէջ, որոշ մանրամասնութեամբ պիտի ներկայացուի մետա-բարոյագիտութիւնը (Meta-Ethics, մետա-էթիկա), որ 20-րդ դարու սկիզբները ծնունդ առաւ եւ զարգացաւ, դառնալով գիտական հիմքը՝ կանոնական եւ նկարագրական բարոյագիտութիւններուն:

Մետա-բարոյագիտութեան ոլորտի մէջ նշանաւոր դարձան հետեւեալ բարոյագէտ փիլիսոփաները.-

- **Բ. Ռասէլ** (Bertrand Russel, 1872 – 1970 թ.),
- **Գ. Ե. Մուր** (George Edward Moore, 1873 – 1958 թ.),
- **Չ. Լ. Ստիվենսոն** (Charles Leslie Stevenson, 1908 – 1979 թ.),
- **Ա. Զ. Այէր** (Alfred Jules Ayer, 1910 – 1989 թ.) եւ
- **Ռ. Մ. Հարը** (Richard Mervyn Hare, 1919 – 2002 թ.):

